Գիտություն

ՄԱՐՏ
№ 3
(268)
2014 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը ապրիլին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը որոշում է ընդունել ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի անցկացման մասին: ՀՀ ԳԱԱ 5 բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովները տեղի կունենան ապրիլի 22-ին: ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը կկայանա սույն թվականի ապրիլի 23-ին: ՀՀ ԳԱԱ 2013 թ. գիտական գործունեության մասին կզեկուցի ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: ՀՀ ԳԱԱ 2013 թ. գիտակազմակերպական գործունեության մասին կզեկուցի ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը: Տարեկան ընդհանուր ժողովի շրջանակներում տեղի կունենա նաև ՀՀ ԳԱԱ 2013 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքների լայն քննարկում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

«Եկել է Սևանին պարտքերը վերադարձնելու ժամանակը»

«Մենք ունենք ՀՀ նախագահի կոնկրետ հանձնարարականը, անմիջական ղեկավարությունը և աջակցությունը առ այն, որ Սևանա լիճը հիվանդ է, պետք է բուժել, որ Սևանա լիճը իր ռեսուրսներով մեզ օգնել է, և եկել է պարտքերը վերադարձնելու Ժամանակը»: Այս մասին մարտի 5-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում հայտարարեց Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Մովսիսյանը:

«Պատրաստվել է 15 փորձագիտական եզրակացություն, որոնք ներկայացվել են ՀՀ նախարարություններին՝ բնապահպանության, արտակարգ իրավիճակների, էներգետիկայի և բնական պաշարների, տարածքային կառավարման, ինչպես նաև ջրային տնտեսության պետական կոմիտեին: 15 եզրակացությունից որևէ մեկը չի հակասել Սևանի մասին գործող օրենքներին»,- ասաց Վլադիմիր Մովսիսյանը:

«Քանի որ հանրապետությունում շրջանառվում են տարբեր մեկնաբանություններ Սևանա լճի վերաբերյալ, թո՛ւյլ տվեք հաղորդել համառոտ տեղեկություններ իրական վիճակի և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ: Սևանա լճի ծավալը 1933-ից մինչև 2002 թ. իջել է՝ 58 միլիարդ խմ-ից հասնելով մինչև 32.7 միլիարդ խմ-ի, մակարդակը նվազել է շուրջ 20 մետրով, ինչը բերել է անցանկալի փոփոխությունների: Այսօր կարևոր նշանակություն ունեն երեք բաղադրիչ՝ մակարդակի բարձրացումը, ջրերի մաքրության ապահովումը և կենսաբազմազանության վերականգնումը: Վերջին 12 տարիների ընթացքում Սևանի մակարդակը բարձրացել է 3.9 մ, իսկ դա նշանակում է, որ լճում ջրի ծավալը ավելացել է 5 միլիարդ խմ-ով: Հիմա մենք Սևանում ունենք 37.7 միլիարդ խմ ջուր:

Սևանի մասին օրենքներով նախատեսված էր յուրաքանչյուր տարի լճի մակարդակը բարձրացնել միջին թվով 21.6 սմ: Վերջին տարվա տվյալներով մենք հասել ենք այդ ծրագրի ժամանակացույցի 2019 թ. մակարդակին, այսինքն՝ 6 տարով արագ տեմպերով ենք լիճը բարձրացրել, քան պետք է բարձրացնեինք: Ես դա շատ դրական եմ համարում»,- ասաց Վլադիմիր Մովսիսյանը: Միաժամանակ նշեց, որ դժվար է սպասել էական դրական ջրաբանական ռեժիմի փոփոխության, քանի դեռ Սևանի մակարդակի նախատեսված 6 մետրով բարձրացմանը չենք հասել: «Կարևորում եմ, որ այդ աշխատանքները պետք է շարունակել, և որ այսուհետ իրավունք չունենք ունենալ Սևանի ջրի հաշվեկշռի բացասական ցուցանիշ»,- ընդգծեց Վլադիմիր Մովսիսյանը:

«Լճի մակարդակի վերաբերյալ ամենալուրջ խնդիրը կապված է Արփա-Սևան թունելի դեֆորմացված հատվածների վերականգնման ծրագրի հետ, որը իրականացնում է կառավարությունը: Ծրագրի արժեքը 11.8 միլիարդ դրամ է: Վերջին 4 տարիներին 7.5 միլիարդը իրականացվել է, և առաջիկա 3 տարիների ընթացքում այդ 3.5 կմ երկարությամբ դեֆորմացված հատվածները կվերականգնվեն: Դեֆորմացումը տեղի է ունեցել տեղանքի ինժեներաերկրաբանական իրավիճակի, ինչպես նաև այդ հատվածներում տեկտոնիկ ճնշումների բարձրացման պատճառով: Աշխատանքներն իրականացվում են սակավաջուր ամիսներին: Անցյալ տարի Արփա-Սևանով լիճ է տեղափոխվել 137 միլիոն խմ ջուր, իսկ երբ ավարտվեն աշխատանքները, տարեկան կտեղափոխվի 250-260 միլիոն խմ: Ոռոգման նպատակով լճից ջրի բացթողումները անցյալ տարի կազմել են 169 միլիոն խմ, նախորդ տարի (2012 թ.) 317 միլիոն խմ»:

Ըստ Վլադիմիր Մովսիսյանի՝ ափամերձ տարածքներից 1660 հեկտարի վրա մաքրվել են անտառները, ապամոնտաժվել և առանց փոխհատուց- ➤3

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ-100



***

Հայաստան ասելիս այտերս
այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս
ծալվում են,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,
Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աչքերս լցվում են,
Հայաստան ասելիս թևերս բացվում են,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է...
Կմնամ, կլինեմ այսպես:

***

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկա:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ
Հողի մեջ այսքան օրհնություն չկա,
Այսքան վաստակած հոգնություն չկա:
Ախր ուրիշ տեղ ձյունի մեջ՝ արև,
Եվ արևի մեջ այսքան ձյուն չկա:
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,
Եկած ուսերով Արագած սարի
Ուսերին հենված Սասնա տուն չկա:
Ախր ուրիշ տեղ
Ամեն մի քարից, առվից, ակոսից
Իմ աչքերով իմ աչքերին նայող
Մանկություն չկա...

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,
Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ:

ՈՒՐ ՈՐ ՆԱՅՈՒՄ ԵՄ

Ուր որ նայում եմ, քարե բարձունք է,
Քարե արցունք է, քարե ժպիտ,
Քարե սարսուռ է ու քարե սունկ է,
Քարե ծաղկունքի քնքշանք է բիրտ:

Քարերի վրա քարե վագրեր են,
Ուր որ է պիտի պատռեն իրար:
Քարե բերդեր են, քարե վանքեր են,
Քարե հավքեր են քիվերն ի վար:

Քարե մրրիկ է ու քարե բուք է,
Քարե բողոք է ու քարե բերդ,
Քարե շեփոր է, քարե թմբուկ է,
Քարե թափոր է, քարերի երթ...

Քարե ընդվզում, քարե տանջանք է,
Քարե ավար է, առևանգում...
Քարե զարմանք է ու զարհուրանք է,
Քարե թռիչք է, քարե անկում:

Քարե ամպրոպ է ու ծիածան է,
Քարե լծկան է ու քարե մաճ.
Քարե մագաղաթ, քարե մատյան է,
Քարե խորհուրդ է ու քարե խաչ:

Մեր բաժին Աստված, քո սիրտն էլ քար էր,
Որ մեզ քարերը տվիր նվեր,
Բայց քո կյանքը կարճ, մերը երկար էր,
Ու երկարում է քարերն ի վեր:

2014 թ. փետրվարի 22-ին կյանքի 92-րդ տարում վախճանվեց ականավոր գիտնականն, աստղաֆիզիկոսը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ Գուրզադյանների ընտանիքին հղած ցավակցական հեռագրում մասնավորապես ասված է. «Սփյուռքից Հայաստան ներգաղթած, հայրենիքում կրթություն ստացած և համաշխարհային ճանաչման արժանացած գիտնականն իր ողջ կյանքը նվիրեց հայրենի գիտության առանձնահատուկ մի ոլորտի զարգացմանը, ղեկավարեց գիտական կենտրոններ, մշակեց տիեզերական համակարգեր:

Տաղանդաշատ գիտնականն ուներ նաև փիլիսոփայի, գրողի և գեղանկարչի առանձնահատուկ շնորհներ, որոնք դրսևորվեցին նրա գիտահանրամատչելի էսսեներում և գունեղ կտավներում:

Խորին ցավակցություն եմ հայտնում Գրիգոր Գուրզադյանի հարազատներին, գործընկերներին և մերձավորներին»:

ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ

Գուրզադյանը ծնվել է 1922 թ. հոկտեմբերի 15-ին Բաղդադում՝ 1915 թվականին Արևմտյան Հայաստանից տեղահանված ծնողների ընտանիքում: 1944-ին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, երկու ֆակուլտետ, ապա՝ ասպիրանտուրան՝ Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ: Լինելով Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր կազմում՝ Գուրզադյանը մեծ ներդրում է ունեցել միգամածությունների, բռնկվող աստղերի ուսումնասիրության մեջ:

Հրատարակել է ավելի քան 200 գիտական հոդված և մեկ տասնյակ ստվարածավալ մենագրություններ՝ նվիրված աստղաֆիզիկայի հիմնախնդիրներին: Նրա գրքերով կրթվել են մասնագետների սերունդներ:



Գրիգոր Գուրզադյանը տիեզերական աստղագիտության առաջնեկներից մեկն է:

Գուրզադյանի ղեկավարությամբ են ստեղծվել տիեզերական «Օրիոն» ուղեծրային աստղադիտարանները՝ տեղադրված 1971-ին «Սալյուտ» առաջին տիեզերական կայանի վրա, ապա «Սոյուզ» տիեզերանավի վրա: Դրանք գերազանցում էին ժամանակակից աշխարհում իրականացվող տիեզերական նման գիտափորձերը և հանգեցրին կարևորագույն գիտական արդյունքների ստացման, տիեզերական սարքաշինական սկզբունքների մշակման:

Նրա ղեկավարությամբ Գառնիի տիեզերական աստղագիտության լաբորատորիայում իրենց նախաթռիչքային պատրաստությունն են անցել ավելի քան 40 խորհրդային տիեզերագնացներ:

Տասնամյակների ընթացքում նա դասախոսել է Երևանի պետական համալսարանում, պոլիտեխնիկական ինստիտուտում հիմնադրել և ղեկավարել է ճշգրիտ սարքաշինության ամբիոնը:

Գուրզադյանի ստեղծագործական ժառանգությանն են պատկանում նաև բազմաթիվ կտավներ, փիլիսոփայական էսսեների մեկ տասնյակ գրքեր՝ նվիրված գիտությանը, արվեստին, ճարտարապետությանը: 2001-ին Գառնիում բացված Տիեզերքի թանգարանում ներկայացված են տիեզերական հետազոտությունների վաղ շրջանի բացառիկ ցուցանմուշներ:

Գրիգոր Գուրզադյանը պարգևատրվել է «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Գրիգոր Գուրզադյանի հրաժեշտի արարողությունը տեղի ունեցավ փետրվարի 25-ին՝ ժամը 12-14-ը, գիտությունների ազգային ակադեմիայում: Հուղարկավորությունը՝ Երևանի քաղաքային պանթեոնում:

ՏԻԵԶԵՐՔԻ ՀԵՏ ԶՐՈՒՅՈՂԸ

ՆԱ ԱՍՏՂԵՐ ԷՐ ՈՐՍՈՒՄ

2014 թվականի փետրվարի 21-ի լույս 22-ի գիշերը վախճանվեց Գրիգոր Գուրզադյանը:

Մեծ աստղաֆիզիկոսի, ինժեներ-կոնստրուկտորի, բառիս ուղղակի և փոխաբերական իմաստներով իսկական արվեստագետի սիրտը կանգ առավ նրա կյանքի 92-րդ տարում:

Երկար ու համառորեն էր պայքարում Գրիգոր Գուրզադյանը ծանր, եթե չասենք ահավոր հիվանդությունների դեմ: Նա կուրացավ երկու աչքով: Հազիվ էր կարողանում ձայներ ընկալել նույնիսկ լսողական սարքի օգնությամբ: Չէր լսում այն մարդը, որն իր ողջ կյանքում ծարավի էր զրույցների, վեճերի, բանավեճերի, երկխոսությունների՝ աստղերի մասին, Տիեզերքի մասին, Ղարաբաղի մասին, Հայաստանի պատմության և ապագայի մասին, քրիստոնեական բարոյականության մասին, պատերազմի և խաղաղության մասին, հայ ժողովրդի համար պառակտման վտանգավորության մասին: Չէր տեսնում այն մարդը, որին Մարտիրոս Սարյանը և Վիլյամ Սարոյանը անվանում էին լույսի ու գույնի երգիչ, նկատի ունենալով նրա վրձնած անկրկնելի արևաշունչ կակաչները կանաչ սարերի լանջերին:

«Օրիոն-2»-ի հաղթարշավից հետո Գուրզադյանն ու իր համախոհները ձեռք զարկեցին մի նոր նախագծի, նոր տիեզերական աստղադիտարանի՝ այն կոչելով «Քրոմոս»: Գուրզադյանի կարծիքով այդ ծրագիրը պետք է հիմք ծառայեր՝ ստեղծելու յուրօրինակ գիտությունների հայկական ակադեմիա Տիեզերքում: Գործընկերներից շատերը ժպիտով էին վերաբերվում բուն գաղափարին: Դրանք իմ կողմից շատ հարգված գիտնականներ էին, որոնց հետ, բնականաբար, ես ինձ թույլ չտվեցի վեճի բռնվել: Քանզի ինձ համար՝ որպես գրողի, չափանիշ էր բուն փաստը, որ Գրիգոր Գուրզադյանն արդեն ապացուցել է, որ իր գաղափարը գործնականում իրականացվել է և փառք բերել Հայաստանին: Չորս աստղադիտակներից և սպեկտրագրաֆներից բաղկացած «Քրոմոսի» բախտն այնպես չբերեց, ինչպես «Օրիոն-2»-ինը: Եվ ասեմ անկեղծորեն, խորապես հոգուս դիպավ ոչ թե գործի տեխնիկական կողմը, որից քիչ եմ հասկանում, այլ Գուրզադյանի գրած բառերը՝ որպես ինչ-որ քնարական, եթե չասենք հայրենասիրական շեղում. «Եթե վաղը Արարատյան դաշտավայրում խփեն նավթի բյուրավոր շատրվաններ, կամ էլ Հայաստանը, ասենք, երկրորդ Ճապոնիա դառնա էլեկտրոնիկայի գծով, ապա բոլորովին էլ չենք զարմացնի աշխարհին: Բայց եթե վաղը բոլոր երկրների բոլոր ռադիոկայանները այդ նույն աշխարհին հայտնեն, թե Երկրի ուղեծիր է դուրս բերվել հայկական արբանյակ՝ հայկական «Քրոմոս» աստղադիտարանով, ապա ողջ աշխարհը կցնցվի մեր Հայաստանով»:

Երազո՞ղ: Ռոմանտի՞կ: Իսկ ինչ կա որ: Մի՞թե վատ բան է լինել թե՛ երազող, թե՛ ռոմանտիկ և միաժամանակ միջազգային հեղինակավոր գիտաժողովի ամբիոնից պաշտոնական հայտարարություն լսել, թե «Թույլ աստղերի սպեկտրալ դասակարգման ապագա են հանդիսանում միայն և միայն Գ. Գուրզադյանի «Օրիոն-2» մեթոդը և Տիեզերք հանված աստղադիտակների և սպեկտրագրաֆների օգնությամբ այդ մեթոդի լայն կիրառումը»:

Այսօր, երբ արդեն կանգ է առել ականավոր գիտնականի և փիլիսոփայի սիրտը (ես հավատում եմ, որ ինչ-որ ժամանակ մեր ժողովուրդը և ընդհանրապես ողջ մարդկությունը նորից նախկին սիրով և նախկին պատկառանքով կվերադառնան գրքին, որի մեջ կտեսնեն աշխարհի փրկությունը և այնժամ կիմանան, թե փիլիսոփայական ինչպիսի աշխատություններ ունի Գուրզադյանը), ես ցանկանում եմ ևս մեկ անգամ մեջբերում կատարել մեր երկխոսություններից մեկից: Ես Գուրզադյանին հիշեցրի, որ շուտով լրանալու է նրա իննսուն տարին: Նա խնդրեց Մարիաննային, որ թեթևակի հարմարեցնի աջ ականջի անիծյալ, ցավ պատճառող, լսողական սարքը: Ես կրկնեցի խոսքերս հոբելյանի մասին: Նա ոչինչ չասաց: Մտածեցի, թե չի լսել, և բավական բարձր դիմեցի.

- Ասում եմ, շուտով լրանալու է իննսուն տարիդ: Քո հոբելյանը:

Նա գլուխը տարուբերեց, հասկացնելով, որ լսել է ինձ, և որ այդ հոբելյանը բոլորովին էլ չի կարող մեր խոսակցության թեմա լինել, և մի տեսակ մտահոգ ասաց.

- Ավելի լավ է դու ինձ պատմես, թե այսօր ինչ է կատարվում աշխարհում:

Այստեղ Մարիաննան, նրան ընդհատելով, հայտնեց, թե ամենուր կռվում են, կրակում են, ռմբակոծում են:

- Այսօր ռմբակոծել են Բաղդադը,- ավելացրի ես:

Աստված իմ, ի՜նչ կատարվեց Գրիգորի հետ: Նա երկար լռեց: Հետ գցեց գլուխը, ասես ինչ-որ բան էր կարդում այնտեղ՝ առաստաղի վրա: Խոր շնչելով՝ դանդաղ կռացավ, ջղոտ ափերով ծածկեց դեմքը և մատների արանքից բարձր արտաբերեց.

- Ես այնտեղ եմ ծնվել: Բաղդադում:

Այո՛, Գուրզադյանը ծնվել է այնտեղ՝ Բաղդադում: Հրաշքով փրկված նրա ապագա ծնողները, չլսված ողբերգություն ապրելով պատմական հայկական Սեբաստիայում, անցել էին Դեր-Զորի մղձավանջների միջով և օթևան գտել Իրաքում: Տասնամյակներ անց Գրիգոր Գուրզադյանի որդին՝ Վահագն Գուրզադյանը, Բաղդադում այցելեց 1640 թվականին կառուցված Սուրբ Տիրամոր հայկական եկեղեցին, որի արխիվներում գտավ ե-



զակի փաստաթղթեր, որոնց մեջ էր նաև Գուրզադյանների ընտանիքում 1922 թվականի հոկտեմբերի 18-ին Գրիգոր անունով կնքված երեխայի ծննդյան գրառումը: Երկու տարի անց այդ ընտանիքը Հայաստան փախավ (հենց փախավ, այդ թվում՝ նաև Արաքսի վրայով):

- Իսկ ո՞րն է քո ամենասիրելի կետը ողջ Տիեզերքում,- հարցրի ես:

- Գառնին,- արագ նետեց նա, ասես պատրաստ էր այդ, թվում է թե տարօրինակ հարցին:

- Ողջ Տիեզերքում միայն Գառնի՞ն,- հարցրի ես:

- Ըստ էության «Օրիոն-1»-ը և «Օրիոն-2»-ը մեկնարկել են ոչ թե Բայկոնուր տիեզերակայանից, այլ պատմական Գառնիից: Տիեզերք թռան իմ որսորդները:

- Ինչո՞ւ որսորդները:

- Նրա համար, որ Օրիոնը որսորդ-հսկա էր, և աստվածների հայր Զևսը նրան վերածեց ամենագեղեցիկ հասարակածային համաստեղության՝ առաջին մեծության երկու վառ աստղերով և երկրորդ մեծության ևս երեք աստղերով: Դե, իսկ մեր «Օրիոնները», Գառնիից թռչելով Տիեզերք, վերադարձան Երկիր և Գառնի բերեցին աստղային հարուստ որս:

Ահա թե ինչ է գրել այդ մասին մեծ աստղագետ, տեսական աստղաֆիզիկայի հիմնադիրներից մեկը՝ Վիկտոր Համազասպի Համբարձումյանը. «Գիտափորձի ղեկավարը և «Օրիոն-2»-ի բոլոր հիմնական սարքերի գլխավոր կոնստրուկտորն է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գրիգոր Գուրզադյանը: Նա նույնպիսի համառությամբ Գառնիում իրագործեց տիեզերքից ստացված լուսանկարների մշակումը: «Օրիոն-2»-ը տվեց ոչ միայն չափազանց հետաքրքիր արդյունքներ գիտության և գիտական սարքաշինության համար, այլև մեր առջև դրեց բոլորովին նոր խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում են նոր «Օրիոններ»:

Ես այս տեքստը նրա համար բարձր ընթերցեցի Մարիաննայի ներկայությամբ: Գրիգոր Գուրզադյանը, ցավից կնճռոտվելով, ականջից դուրս քաշեց լսողական սարքի ծայրը և ասաց. «Այդ ամենը ճիշտ է: Սակայն ես մենակ չէի: Ինձ հետ էին և՛ Կորոլյովը, և՛ տիեզերագնացները, և՛ հայ գիտնականները, և՛ հայկական գիտությունը և՛, իհարկե, ողջ Հայաստանը»:

Երկնային արքայություն քեզ, թանկագի՛ն որսորդ աստեղաց...

Զորի ԲԱԼԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, աստղաֆիզիկոս, Հայկական ազգային գիտակրթական հիմնադրամի գիտխորհրդի նախագահ (ANSEF), ԱՄՆ Կոռնելի համալսարանի պրոֆեսոր Երվանդ Թերզյանը ծնվել է 1939 թվականի փետրվարի 9-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Հայրը հայ էր, մայրը՝ հույն. այսպիսով, հույները Թերզյանին համարում են հույն մեծ գիտնական, ինչպես և հայերը՝ հայ մեծ գիտնական: Դպրոցն ավարտել է Ալեքսանդրիայում և սովորել Կահիրեի ամերիկյան համալսարանում: 1960թ. ստացել է նույն համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետի բակալավրի դիպլոմ: Այնուհետև, տեղափոխվելով ԱՄՆ, Ինդիանայի համալսարանում 1963 թ. ստացել է աստղագիտության գծով մագիստրոսի, իսկ ավելի ուշ՝ 1965թ.՝ գիտությունների դոկտորի աստիճան:

Երվանդ Թերզյան

1965թ.-ից Թերզյանի գիտական և մանկավարժական գործունեությունը կապված է Կոռնելի համալսարանի հետ: Նրա գիտական և մանկավարժական կարիերան այդուհետ միայն վերելք էր գրանցելու, քանզի տաղանդավորը և աշխատասերը համատեղվել էին մեկ մարդու մեջ: 1965-1967թթ. Երվանդ Թերզյանը դառնում է Պուերտո Ռիկոյի Արեսիբոյի աստղադիտարանի գիտական աշխատակից, իսկ 1967-1972թթ. արդեն աստղագիտության պրոֆեսորի օգնական էր: 1968-1974թթ.՝ նույն համալսարանի ռադիոֆիզիկայի և տիեզերական հետազոտությունների կենտրոնի տնօրենի օգնական, 1972-1977թթ.՝ աստղագիտության դոցենտ: 1977թ. ստանում է Կոռնելի համալսարանի աստղագիտության պրոֆեսորի կոչում:

1968թ. Թերզյանը նշանակվեց Կոռնելի համալսարանի աստղագիտության բաժանմունքի փոխտնօրեն, իսկ 1979թ.՝ տնօրեն և գլխավորեց այս մեծ բաժանմունքը շուրջ 20 տարի: 1979-80թթ. և 1992-93թթ. եղել է Կոռնելի համալսարանի Արեսիբոյի ռադիոֆիզիկայի և տիեզերական հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնակատար: 1996թ.-ից Կոռնելի համալսարանի գիտության և կրթության զարգացման Նյու Յորքի նահանգի ՆԱՍԱ-ի (NASA) տիեզերական դրամաշնորհների ծրագրի տնօրենն է:

2002թ. Թերզյանն ընտրվեց Քառակուսի կիլոմետրանոց համալիր (SKA) հսկա ռադիոդիտակի կառուցման Միացյալ Նահանգների համալսարանների և ինստիտուտների միավորման նախագահ: 2001թ.-ից նա Հայկական ազգային գիտակրթական հիմնադրամի գիտական խորհրդի նախագահն է:

Պրոֆեսոր Թերզյանի գիտական բնագավառները բազմաթիվ են. մոլորակաձև միգամածություններից և բաբախիչներից (պուլսարներ) մինչև գալակտիկաների զույգեր ու քվազարներ: Նրա ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են ռադիոալիքներում, այնուհանդերձ շատ հոդվածներ նվիրված են ենթակարմիր, օպտիկական և գերմանուշակագույն տիրույթներում հետազոտություններին: Նշված արդյունքները ստացվել են այլ գործընկերների, որոնց թվում նաև հայազգի գիտնականների հետ համատեղ:

Այս տարիների ընթացքում Թերզյանը հրատարակել է ավելի քան 232 գիտական հոդված և 6 գրքի խմբագիր է: Ի դեպ, գիտական հոդվածներ նա տպագրել է Nature ամսագրում, որտեղ հիմնականում տպագրվում են միայն ակնառու արդյունքներ ձեռք բերած նշանավոր գիտնականների նյութերը:

Շուրջ 10 տարի՝ 1989-1999 թթ., Թերզյանը եղել է Astrophysical Journal-ի՝ աշխարհի աստղագիտական առաջատար հանդեսներից մեկի խմբագրի տեղակալը և գիտական խմբագիրը, ինչպես նաև մասնագիտական մի շարք հանդեսների խմբագրականների կոլեգիայի անդամ: Նա միաժամանակ Միջազգային աստղագիտական միություն, Միջազգային ռադիոգիտական միություն, Ամերիկյան աստղագիտական ընկերություն, Հայկական աստղագիտական ընկերություն, Հունական աստղագիտական ընկերություն, Սիգմա Խի, Ամերիկյան գիտության առաջադիմության ասոցիացիայի անդամ է:

Գիտական նվաճումների և մանկավարժական վաստակի համար պրոֆ. Թերզյանը պարգևատրվել ու արժանացել է բազմաթիվ տիտղոսների, աստիճանների, մեդալների և կոչումների՝ Ինդիանայի համալսարանի (ԱՄՆ, 1989), Երևանի պետական համալսարանի (Հայաստան, 1994), Թեսալոնիկիի համալսարանի (Հունաստան, 1997) և Յունիոն քոլեջի (Նյու Յորքի նահանգ, ԱՄՆ, 1999) պատվավոր դոկտորի գիտական աստիճան, ՀՀ կրթության և գիտության նախարարության Ոսկե մեդալ (2008) և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Վիկտոր Համբարձումյանի անվան մեդալ (2008):

Անհրաժեշտ է նշել պրոֆ. Թերզյանի գործունեության ժամանակակից երկու կարևորագույն ուղղությունները, որոնք մեծապես նպաստում են Հայաստանում աստղագիտության և ընդհանրապես գիտության զարգացմանը. նրա դերը ANSEF-ի և ArAS-ի ստեղծման և գործունեության մեջ:

Հայկական ազգային գիտակրթական հիմնադրամը (ANSEF) հիմնադրվել է 1999թ. Նյու Յորքում՝ մի խումբ հայ գիտնականների և այլ մտավորականների կողմից, որոնց թվում է նաև Երվանդ Թերզյանը: Հիմնադրման օրվանից պրոֆ. Թերզյանը ANSEF-ի գիտական խորհրդի նախագահն է: ANSEF-ը տրամադրում է հետազոտական դրամաշնորհներ: 2001-2008թթ. ընթացքում դրամաշնորհի է արժանացել մոտ 200 նախագիծ, յուրաքանչյուրը՝ 5000-ական ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ ավելի քան 500 գիտնականներ օգտվել են այս աջակցությունից:

2002թ. առ այսօր Թերզյանը Հայկական աստղագիտական ընկերության համանախագահն է: Նա մեծապես նպաստում է ընկերության գոյությանը և գործունեությանը և մեծ դեր ունի Հայաստանում և արտասահմանում ապրող աստղագետների միջև կապեր հաստատելու գործում: 2004թ. Թերզյանը երիտասարդ աստղագետների համար հիմնադրեց ArAS-ի տարեկան մրցանակ և հովանավորում է այդ մրցանակները: Ութ երիտասարդ աստղագետներ են ստացել այդ մրցանակը, որն իրավամբ կարելի է անվանել «Երվանդ Թերզյանի մրցանակ»: *(Նյութի պատրաստման ընթացքում օգտվել ենք Հայկական աստղագիտական ընկերության կայքից):*

Նա այսօր էլ ակտիվորեն աշխատում է և ջանում է իր գիտելիքները փոխանցել երիտասարդ գիտնականներին: Դրա լավագույն օրինակը 2012թ. սեպտեմբերի 15-23-ին Բյուրականի աստղադիտարանում տեղի ունեցած երիտասարդ աստղագետների միջազգային դպրոցի բացումն է, որտեղ դասախոսություններով հանդես եկավ նաև պրոֆեսոր Երվանդ Թերզյանը:

Հաշվի առնելով Երվանդ Թերզյանի գիտական, մանկավարժական, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 1990 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Վերջերս լրացավ Երվանդ Թերզյանի ծննդյան 75-ամյակը, ինչի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահությունը ջերմորեն շնորհավորեց մեծանուն գիտնականին :

Երվանդ Թերզյանն այսօր էլ իր նպաստն է բերում աստղաֆիզիկայի ոլորտի զարգացման գործում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ, ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտքարտուղար

Եկել է Սևանին պարտքերը...

➢1 ման տեղափոխվել են 362 շենք-շինություն, բոլոր ինժեներական կառուցվածքները, որոնք ջրածածկվել էին, տեղափոխված են:

Իսկ լճի էկոլոգիական վիճակի վերաբերյալ պատկերը, ըստ Վլադիմիր Մովսիսյանի, հետևյալն է. «Մակարդակը բարձրացել է, հատակի ջերմաստիճանը արդեն նվազել է 5-6 աստիճանով: Լճի ջրի լուսաթափանցելիությունը, որ նախկինում իջել էր 3-4 մետր, հիմա ափերի մոտ 8.5-10 մետր է, իսկ լճի կենտրոնում՝ մինչև 11 մետր: Առկա է ձկան պաշարների որոշակի ավելացում, եթե նախորդ տարիներին միայն էնդեմիկ տեսակների որոշակի չնչին ավելացում կար, անցյալ տարի մենք մոնիթորինգով փաստել ենք նաև սիգ ձկնատեսակի քանակի ավելացում»:

Վլադիմիր Մովսիսյանի խոսքով անխնա օգտագործման պատճառով ձկնային պաշարներին հասցվել է հսկայական վնաս. «Սևանի էնդեմիկ ձկնատեսակների արհեստական բազմացման, վերարտադրության շնորհիվ դրական տեղաշարժ կա: Վերջին 7 տարիների ընթացքում բնապահպանության նախարարության միջոցով Սևանա լիճ է լցվել ավելի քան 2 միլիոն մանրաձուկ, և այս բոլորը բերել է արհեստական վերարտադրության բարելավման, բայց սա խնդրի լուծումը չէ: Եթե մենք չենք կարողանում պայմաններ ստեղծել բնական վերարտադրության համար, ուրեմն՝ դրական արդյունքի հասնել չենք կարող: Արհեստականի հետ միասին շարունակում ենք նաև ցանցավանդակային եղանակով ձկներ աճեցնելու պիլոտային ծրագիրը: Պիլոտային ծրագիրն ավարտված է, մոնիթորինգն արված է և պետք է շարունակվի: Այստեղ մենք մեզ համար տեսնում ենք 2-3 խնդիր, որոնք կարող են նպաստել բնական վերարտադրությանը: Առաջինը ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերի բնական հուների վերականգնումն է ու մաքրության ապահովումը: Հաջորդը՝ այդ 10 գետերի վրա կառուցված հէկ-երի խնդիրն է, որոնք իրենց կառույցներով արգելակում են ձկների ազատ հոսքը դեպի վեր, դեպի բնական ձվադրում: Մենք մոնիթորինգի ենք ենթարկել դրանցից 7-ը, 7-ում էլ գտել ենք զգալի թերություններ ձկնթող համակարգի առումով: Դրանց վերաբերյալ մեր առաջարկությունները ներկայացրել ենք ՀՀ կառավարությանը և ՀՀ նախագահին: Հիմա կառավարությունը մտել է ՀՀ Ազգային ժողով, որպեսզի օրենքով արգելի այդ գետերի վրա հէկ-երի կառուցումը և եղած բոլոր հէկ-երը տեխնոլոգիապես և տեխնիկապես կառուցվեն այնպես, որ չխոչընդոտեն ձկների վերարտադրությունը»,- եզրափակեց Վլադիմիր Մովսիսյանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական վերլուծական կենտրոն

Օրերս մարտի 6-ին ՀՀ Ազգային գրադարանի մեծ դահլիճում տնօրինությունը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վերժինե Սվազլյանի 80-ամյա հոբելյանին նվիրված մեծարման ցերեկույթը:

Նախասրահում՝ ցուցափեղկերի տակ, ցուցադրված էին վաստակաշատ գիտնականի

ՎԱՍՏԱԿԱՇԱՐԴ ՀՈԲԵԼՅԱՆ

շուրջ 60 տարիների ընթացքում Հայաստանում և արտերկրում տարբեր լեզուներով լույս տեսած 25 գրքերն ու բազմաթիվ գիտական հոդվածները:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը:

Սկզբում նշվեց Վ. Սվազլյանի արժանահիշատակ հոր՝ Գառնիկ Սվազլյանի 110-ամյա հոբելյանը: Նրա թոռնուհին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Քնարիկ Ավագյանը լուսանկարային ցուցադրությամբ զեկուցեց եգիպտահայ հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, երգիծանկարիչ, դրամատուրգ Գառնիկ Սվազլյանի՝ (1904, Կեսարիա-1948, Երևան) Սփյուռքում ծավալած հայրենանպաստ գործունեության մասին. 1930-ական թվականներին՝ որպես Հովի. Թումանյանի հիմնադրած ՀՕԿ-ի (Հայաստանի օգնության կոմիտե) եգիպտահայ մասնաճյուղի նախագահ, ապա՝ 1940-ական թվականներին նրա հիմնադրած «Սևան» մշակութային միության հայանպաստ գործունեությունը և ի վերջո նրա «Ներգաղթը» թատերգությունը, որը բեմադրվել է Սփյուռքի հայաշատ գաղթօջախներում՝ մեծապես նպաստելով զանգվածային հայրենադարձության կազմակերպմանը, իսկ 1990-ական թվականներին արվեստագիտության դոկտոր Լուիզա Սամվելյանի ջանքերով այն բազմիցս բեմադրվել է նաև հայրենիքում՝ ի հեծուկս արտագաղթի:

Այնուհետև անցան Վերժինե Սվազլյանի գիտական վաստակի գնահատմանը: Զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Սվետլանա Վարդանյանը՝ հանգամանորեն ներկայացնելով հոբելյարի 60-ամյա գիտական և հասարակական գործունեության դժվարին, բայց արգասավոր ուղին:

Նույն ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Թամար Հայրապետյանը, ելույթ ունենալով, ընդգծեց Վ. Սվազլյանի ցեղասպանագիտական աշխատությունները՝ առանձնապես շեշտը դնելով «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» աշխատության հայերեն, անգլերեն և վերջերս Թուրքիայում «Բելգե» («Փաստարկ») հրատարակչության տնօրեն Ռագըպ Զարաքոլուի հրատարակած թուրքերեն տարբերակի վրա, որը, ըստ նրա. «...անտարակույս պետք է համարել պատմաքաղաքական աննախադեպ երևույթ, քանի որ լույս է տեսել ոչ թե մի սովորական գիրք, այլ հանրագիտարանային, գիտատեղեկատվական մի հզոր շտեմարան՝ Օսմանյան կայսրությունում հայերի պետականորեն ծրագրված ցեղասպանության ականատես վերապրողների ցուցմունք-վկայությունների ու դրանց միջազգային իրավական անժխտելի հիմքերի մասին: Հսկայածավալ ու տարաբնույթ ընդգրկումներ ունեցող այդ աշխատությունն ունի գիտական ուսումնասիրություն, որտեղ առաջին անգամ հայ բանագիտության մեջ բնորոշվում է «հուշ-վկայություն» եզրույթը՝ որպես ժանր: Բացի այդ, վերապրողների հաղորդած պատմական տվյալների հիման վրա հեղինակը ներկայացնում է Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքը: ...Հարկ է նշել նաև Վ. Սվազլյանի գիտամեթոդական նորամուծությունների մասին. այդ հանրագիտարանային բնույթի ստվարածավալ հատորում առաջին անգամ 700 միավոր փաստագրական նյութերի թեմատիկ ցուցիչների առկայությունն է, որը մեծապես կնպաստի հետագա ուսումնասիրողների աշխատանքներին»:

Այնուհետև ելույթ ունեցավ ԵՊՀ-ի բանասիրական բաժնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սարգիս Մխիթարյանը, որն արժևորեց տասնամյակների ընթացքում Վ. Սվազլյանի հրատարակած բանահյուսական ժողովածուները՝ «Մուսա լեռ», «Կիլիկիա», «Պոլսահայոց բանահիւսութիւնը» և այլն, ընդ որում հեղինակի նպատակադրած ջանքերով կորստից փրկված արևմտահայոց բանավոր մշակույթի նշխարները:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Զեմմա Բառնասյանը բարձր գնահատեց Վ. Սվազլյանի բանահյուսական նյութերի նաև բարբառագիտական արժեքը, ինչը մեծապես կնպաստի լեզվաբանների հետագա ուսումնասիրություններին:

Ընթերցվեց Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանի ուղերձը. «...Տիկին Սվազլյան, Ձեր կատարած աշխատանքի աներևակայելի արժեքը վաղն ավելի է մեծանալու, ձեռք է բերելու նաև իրավական ուժ՝ գալիք ժամանակների արդար դատաստանի համար: ...Ձեր գործունեությունը եղել և մնում է հոգևոր ազատամարտ, հոգևոր պայքար՝ հանուն արդարության, հանուն ճշմարտության...»:

Թուրքագետ Սարգիս Հացպանյանը թարգմանաբար ընթերցեց «Բելգե» հրատարակչության հիմնադիր Ռագըպ Զարաքոլուի շնորհավորական խոսքը. «Մեծարգո տիկին Սվազլյան, Ձեր կատարած վիթխարի աշխատանքի շնորհիվ մեր պատմության ամենասարսափելի իրողության՝ Հայոց ցեղասպանության դժոխքով անցած անմեղների վկայությունները կարելի եղավ մարդկության գնահատականին ներկայացնել: Ես շնորհակալ եմ իմ ճակատագրից և անձնապես հպարտ, որ այդ մեծագույն գործի թուրքերեն տարբերակի տպագրության փոքրիկ մասն էլ ինձ բաժին հասավ: Դուք Ձեր կատարած գործով, հարգելի տիկին Սվազլյան, մարդկության դեմ գործված մեծագույն հանցանքը պատժելուն ուղղված արդարության պահանջին իբրև ջահակիր արդեն իսկ պատմության մեջ Ձեր արժանի տեղը զբաղեցրած հայուհի եք»:

Վ. Սվազլյանի կյանքն ու գործունեությունը, բանաստեղծորեն ուրվագծելով և լուսանկարային ցուցադրությամբ, ներկայացրեց հոբելյարի դուստրը՝ Քնարիկ Ավագյանը:

Իրենց հայաշունչ երգերով ներկաներին հուզեցին հայտնի գրող-մեներգիչ Արսեն Համբարյանը և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի սիրիահայ ուսանողուհի Արաքս Մահտեսյանը:

Միջոցառման ավարտին հոբելյար Վերժինե Սվազլյանն իր երախտագիտությունը հայտնեց հայ ժողովրդի այն ներկայացուցիչներին, որոնք, հերոսաբար դիմագրավելով կյանքի դաժան փորձություններին, իրենց հիշողության խորխորատներում անթեղած պահել ու պահպանել էին իրենց տեսածն ու զգացածը, որպեսզի այդ բոլորը տարբեր լեզուներով ներկայացվեն աշխարհին ու մարդկության արդար դատին:

Ապա Վ. Սվազլյանն իր հոբելյանի առթիվ Ազգային գրադարանի տնօրինությանը նվիրեց «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» իր ստվարածավալ հատորների (հայերեն և անգլերեն), ինչպես նաև՝ «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» (ռուսերեն և անգլերեն) մենագրության խորհրդանշական 80-ական օրինակները, որպեսզի առաքվեն Հայաստանի բոլոր մարզերի գրադարաններին, ինչպես նաև արտերկրի ուսումնագիտական կենտրոններին և գրադարաններին:

Վ. Սվազլյանն Ազգային գրադարանին նվիրեց նաև «The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife» [«Համաշխարհային ֆոլկլոր և ժողովրդական կենցաղ»] մեծադիր քառահատորյակը, որտեղ առաջին անգամ ներկայացված է Հայաստանը՝ իր իսկ գրած «Armenia» մեծածավալ և բազմաբովանդակ հոդվածով (v. II, Westport, London: Greenwood Press, 2006, pp. 357-372):

Զեմմա ԲԱՌՆԱՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Թուրքերը շարունակում են Անիի պատմությունից ջնջել հայկական հետքը

Թուրքիայի պետական «Անադոլու» լրատվական գործակալության պատմական փաստերի խեղաթյուրումներին անդրադարձել է թուրքական «Դեմոկրատ հաբեր» լրատվական կայքը՝ նշելով, որ փորձ է արվում հայոց միջնադարյան մայրաքաղաք Անիի պատմությունից ջնջել հայկական ինքնության հետքերը:

«Անիի մասին գործակալության հաղորդած տեղեկությունների համաձայն՝ շուրջ 7- հազարամյա պատմություն ունեցող այդ քաղաքի առաջին բնակիչները, իբր, եղել են սկյութական ծագում ունեցող թուրքերը (Saka Turkler), իսկ քաղաքի ամենանշանավոր կոթողներն էլ մզկիթներն են»,- ընդգծում է «Դեմոկրատ հաբերը»:

Լրատվամիջոցը հիշեցնում է, որ 2008-ին Թուրքիայի մշակույթի նախարարությունը, ստեղծելով Անիի մասին ինտերնետային կայք, խուսափել է «հայ» բառի գործածումից: Եվ ահա 6 տարի անց, փաստորեն, նույն բանն անում է «Անադոլուն», երբ իր բաժանորդներին Անիի մասին լրատվություն տրամադրելիս շրջանցում է «հայ» բառը: Անիի մասին պատմող «Անադոլուի» լուրի մեջ ամեն ինչ ու ամենքը կան, բացի հայերից: Հիշատակվում է Սասանյանների, բյուզանդացիների, վրացիների, կարա-կոյունլուների, ակ-կոյունլուների, օսմանցիների և ռուսների մասին, բայց ոչ հայերի: Նույնիսկ Բագրատունյաց դինաստիայի մասին հիշատակող հատվածներում չի նշվում, որ այդ դինաստիայի ներկայացուցիչները հայեր են եղել:

Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության նախարարության Կարսի նահանգային վարչության ղեկավար Հաքան Դողանայը նույնպես բառ անգամ չի ասում հայերի թողած պատմական հետքերի մասին: Փոխարենը նշել է, որ Անին իր միջնադարյան ճարտարապետության կոթողներով մեծարժեք է և զբոսաշրջության զարգացման տեսանկյունից՝ խիստ գրավիչ:

Նշենք, որ Ախուրյան գետի աջ ափին՝ եռանկյունաձև սարահարթի վրա գտնվող Անին եղել է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքներից մեկը: Տարածքը բնակելի է եղել անհիշելի ժամանակներից: Քաղաքն ունեցել է զարգացման երեք շրջան՝ Կամսարականների, Բագրատունիների (X-XI դդ.) և Զաքարյանների (XII-XVI դդ): Քաղաքը հայտնի է եղել նաև «Հազար ու մի եկեղեցիների քաղաք» և «Արևելքի մարգարիտ» անվանումներով: Միջնադարյան Հայաստանի պատմության մեջ Անին բացառիկ դեր է կատարել ոչ միայն որպես երկրի քաղաքական ու հոգևոր կենտրոն՝ թագավորանիստ և կաթողիկոսանիստ, այլև քաղաքային կյանքի, տնտեսության, արհեստների ու առևտրի, մշակույթի և արվեստի զարգացման առաջնակարգ վայր: Պատահական չէ, որ այս քաղաքի պատմության և ընդհանուր մշակութային ժառանգության ուսումնասիրությունը հայագիտության մեջ առանձին անունով ***Անիագիտություն*** է կոչվում:

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐ. Առասպել և Պատմություն

Վերջերս ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց ավելի քան 560 էջ ծավալ կազմող մի հույժ արժեքավոր ժողովածու՝ «Հայկազունիներ»-ը: Այն տասնամյակներ շարունակ գիտնականների փայփայած երազանքների և պրպտումների արդյունքն է և կարող է դրվել նորանկախ Հայաստանի Հանրապետության տարիներին ասպարեզ ելած «Աստվածաշնչական Հայաստան» և «Տիգրան Մեծ» ժողովածուների մոտ՝ նույն շարքում: «Հայկազունիներ»-ի հիմքը կազմում են երկու ընդարձակ բաժիններ: Նրանցից մեկը ամփոփում է սկսած 19–րդ դարի վերջերից մինչև նախորդ դարի վերջին տասնամյակները լույս տեսած կարևորագույն հայագիտական ուսումնասիրությունները, ինչպես Ալիշանի, Սրվանձտյանի, Մանանդյանի, Ադոնցի, Թումանովի և այլոց աշխատությունները: Ժողովածուն, ընտրելով այս և նման հեղինակների գործերը, որոնց մի մասը կամ բիբլիոգրաֆիական հազվագյուտ նմուշներ են, կամ էլ տակավին անծանոթ են մեր ժամանակակիցների մի մասին, շահեկանորեն հավաքել է մի գրքի մեջ: Անկասկած, գրքի այս բաժնում ժողովված նյութերը կազմում են հիմնախնդրի անկյունաքարը և վաղուց ի վեր ստացել են դասական արժեք:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում 2012 թ. հունիսի 5-ից 6-ը տեղի ունեցավ «Հայկազունիներ. պատմություն և առասպել» միջազգային գիտաժողովը: Նոր ժողովածուի մյուս բաժինն էլ արտացոլում է այս աշխույժ գիտական համաժողովում հնչած զեկուցումները: Հետևաբար՝ նորաթուխ ժողովածուն մի իսկական զուգակշիռք է, ծանր ու թեթև անելով կշեռքի մի նժարին դրված դասական հայագիտության արժանի գործերը և մյուս նժարին՝ առկա ժամանակակից բազմաթիվ գիտությունների խաչմերուկներում ծնված աշխատությունները:

Ժողովածուի էջերում տեսանելի է հայագիտական մտքի խոր ժառանգականությունը. նույն գիտական խնդիրները հետաքրքրել են և՛ անցյալի, և՛ մեր օրերի գիտնականներին, և նախկինում արվածը հաճախ պարարտ հող է ծառայել նոր կռահումների և բացահայտումների համար: Սրանց կողքին, քանի որ գիտությունը, այնուամենայնիվ, առաջ է շարժվում, ժողովածուի մեջ արտահայտվել են նոր մոտեցումներ, որոնք գալիս են ինչպես գիտական նոր դիսցիպլիններից, օրինակ՝ գենետիկայից, ֆիզիկական մարդաբանությունից և այլն, այնպես էլ աղբյուրագիտական հիմքի ընդարձակումից, օրինակ՝ շնորհիվ հնագիտության, համեմատական առասպելաբանության, լեզվաբանության, ազգաբանության:

Ժողովածուի խորագրին նայելիս դժվար չէ պատկերացնել, որ «Հայկազունիներ» գիտական առարկայի շուրջ նման կոլեկտիվ ուսումնասիրություն կարող էր ստեղծվել միայն անկախ պետականության տարիներին: «Հայկազունիներ»-ի խնդիրը տվյալ դեպքում գաղափարական է և նվազ չափով քաղաքական:

Ա գրքում Խորենացին պարզաբանել է իր Պատմությունը ստեղծելու նպատակները, նրա համար պահանջվող և գտած աղբյուրները և մագաղաթին է հանձնել Հայոց նախնիների՝ Հայկյանների պատմությունը: Հայկազունիները հաստատագրված են նաև մյուս նշանավոր պատմական գործում՝ Սեբեոս եպիսկոպոսի Պատմության մեջ: Հետևաբար, շոշափվող

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐ

ժողովածուի գաղափարական անկյունաքարը Սեբեոսի «Հայոց Պատմությունում» և Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունում» հիշատակված Հայոց նախնիների ցանկերն են:

Պատմություն բառը բազմանշանակ է՝ պարունակելով տրամագծորեն տարբեր իմաստներ. մի դեպքում սա ուղղակի պատում է, հեքիաթ, զրույց, գեղարվեստական ստեղծագործություն, իսկ հակառակ դեպքում՝ ստուգված և հավաստի փաստերի հիման վրա շարադրած միտք անցյալի վերաբերյալ: Այս բոլոր առումներով էլ պատմությունը հասկացել և տեսակավորել է իր գրքում հանճարեղ Խորենացին:

Այժմ՝ ավելի քան հազար հինգ հարյուր տարի անց, գիտնականները միավորվել և անդրադառնում են Հայկազունիներին՝ խնդիրը վերնագրելով «առասպել և պատմություն»: Կարծես սրանից երևում է, որ փորձ է արվել տրոհել, հնարավորինս տարանջատել ու դասդասել այն, ինչ իրական փաստ է, և այն, ինչ նախնիների մտքի երևակայություն, իղձերի, պատկերացումների և գեղագիտական ընկալումների գեղեցիկ մարմնավորում է, այլ կերպ ասած՝ առասպել: Ընդ որում, նման մոտեցում իր ժամանակ արդեն իսկ ունեցել է Խորենացին: Պատմահայրը իր գրքի բոլոր հատվածները շարադրելիս նախ ընթերցողին ծանոթացրել է այն սկզբնաղբյուրներին, որոնց հիման վրա տվել է շարադրանքը, արտահայտել է իր վերաբերմունքը դեպի այդ աղբյուրները, չի զլացել ընդգրկել իր գործում անգամ անհավաստի կամ այդպիսին թվացող աղբյուրները՝ փրկելու համար դրանք ոչնչացումից, կարծես կանխատեսելով, որ մի օր հեռավոր ապագայում դրանք ևս կունենան գիտական արժեք և կդառնան անգնահատելի աղբյուր Հայոց և հարևան ժողովուրդների անցյալը տեսնելու համար:



Ուշագրավ է, որ մեր նոր ժողովածուի նպատակն էլ նույնն է, այսինքն՝ մերօրյա գիտնականները Խորենացու, Սեբեոսի և նրանց հարող պատմիչների կրտսեր գործընկերներն են և շարունակեցին նրանց որդեգրած եղանակներն ու սկզբունքները, սակայն քսանմեկերորդ դարի գիտության բարձունքից՝ զինված ոչ միայն նորագույն մեթոդներով, այլև ահռելի ծավալի հասնող համեմատական աղբյուրներով, որոնք կարող են ավելի վառ լուսավորել և նախկինում դեռևս մութ տիրույթում անգամ տեսանելի դարձնել Հայոց պատմությունը:

Ժողովածուում տեղ գտած աշխատանքների թեմաները շատ բազմազան էին. Հայկյանների պատմությունը հին և միջնադարյան մերձավորարևելյան գրավոր և բանահյուսական սկզբնաղբյուրների հենքի վրա, Հայկյանները և Հայաստանի պատմական աշխարհագրությունը, հայոց լեզուն և նրա հնչյունային առանձնահատկությունները՝ համաձայն Խորենացու թողած տերմինների, Հայկազունիների պատմական՝ իրական հիմքը, Խորենացու և Սեբեոսի ներկայացրած Հայկազունիները և մեր օրերի հնագիտությունը, հավատալիքները, ֆետիշն ու տոտեմը, նահապետները Խորենացու գործում: Ավելին, Հայկյանները մղել են նաև դեպի գենետիկական բնույթի ուսումնասիրությունները և աստղաֆիզիկայի ոլորտները:

Առնվազն երկրորդ հազարամյակն է, ինչ մեր նախնիներին ու մեր ժամանակակիցներին հետաքրքրում է՝ Հայկազունիները կամ Հայկյանները բնիկ Հայոց գերդաստա՞ն են, թե՞ եկել են դրսից, արդյոք գոյություն ունի՞ ժառանգականություն Վանի թագավորության և Երվանդունի Հայաստանի միջև, որտե՞ղ է գտնվել Թորգոմի տունը, Հայասա-Ազզին և ե՞րբ են սկզբնավորվել, ո՞րն է վաղնջական Հայաստանի պատմաաշխարհագրական միջուկը, ինչպե՞ս մեկնաբանել «Հայկ» և «հայ» անունները, Հայկ Նահապետը պատմական դե՞մք է, թե՞ հայ ժողովրդի խտացված կերպարը, ի՞նչ ծագում ունեն հայկական արքայական հարստությունները, բնի՞կ, թե՞ օտար, ծագումով ո՞վ է ամենահզոր Հայոց արքա Տիգրան Մեծը: Խորենացու և Սեբեոսի տվյալների շնորհիվ, ինչպես պարզվում է, կարելի է հարցադրել և մասամբ լուծել վերոհիշյալ և ուրիշ բազմաթիվ հայագիտական խնդիրներ, և դրա արտացոլումը «Հայկազունիներ» գիրքն է:

Բերված հարցադրումների, սրանց վերաբերող վարկածների կամ հաստատուն հայտարարված եզրակացությունների միայն մի մասն է առայժմ արժանի դառնալու տեսություն, ամրագրվել որպես ստուգված և հավաստի տվյալ հայ ժողովրդի պատմամշակութային անցյալի մասին: Ժողովածուն զարդարող որոշ վարկածների սրամիտ և հետաքրքիր կռահումներն էլ սպասելու են այն ժամանակներին, երբ դրանք հնարավոր կլինի ստուգել՝ արդարացնել կամ հերքել:

Ժողովածուն նաև ցույց է տալիս Հայկազունիների խնդրում այսօր հայագիտության մեջ իշխող վիճակը, միտումները, բացերը, թերությունները, խանգարող օբյեկտիվ կամ մարդածին գործոնները:

Հայկազունիներին նվիրված ժողովածուն՝ մի հերթական շերտ է՝ դրված հայագիտության կառույցի վրա, և այն, անկախ իր տեսական նվաճումներից, որոնք առկա են գրքի էջերում, մի կողմից հաճելի ընթերցարան է Հայոց և հարևան ազգերի պատմությունով հետաքրքրվողների համար, իսկ մյուս կողմից էլ՝ հույժ արժեքավոր, մի տեղ հավաքված և խմբագրված տեղեկատու շտեմարան՝ հետագա ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ժողովածուն նախանշում է գիտության անելիքները, որոնք ահռելի են ծավալով, բազմազան՝ բնագավառներով և իրականանալի միայն բարի կամքի և գիտնականների համագործակցության շնորհիվ:

Պոլիգրաֆիական բարձր որակով հրատարակված շքեղ ժողովածուն հագեցած է թեմային առնչվող պատմական քարտեզներով և ուշագրավ նկարազարդումներով: Հայկազունիների մասին լույս տեսած անդրանիկ ժողովածուն՝ այս կարևոր գիտական և հայանպաստ հուշարձանը, անհնարին կլիներ տեսնել ասպարեզում առանց գիտության նվիրյալների՝ գիտնականների և գիտությանը սատարող անշահախնդիր բարերար, ամերիկահայ հայրենանվեր գործիչ Էդվարդ Մսըրլյանի, որը նախ եռանդով և նյութապես սատարեց հայոց նախնիներին նվիրված միջազգային գիտաժողովը ու ապա իր ուսերին վերցրեց «Հայկազունիներ» ժողովածուն հրատարակելու ծանր ու պատվավոր բեռը:

Հայկ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմ. գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ

Տաղանդավոր Թաշճյան. դերասան, բեմադրիչ, նկարիչ

Տաղանդավոր Թաշճյան. այսպես էին սովորաբար բնութագրում Իրանի հայ թատրոնի հիմնադիրներից մեկին՝ Մկրտիչ Թաշճյանին, նրա բնատուր շռայլ ունակություններին հավելելով մարդկային բարձր հատկանիշները:

Մկրտիչ Թաշճյանը (1888-1958) ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, որտեղ էլ ստացել է իր նախնական կրթությունը: Մայրը՝ Գոհարը, ֆրանսերենի և ձեռագործի ուսուցչուհի էր: Հոր հանկարծահաս մահը պատճառ դարձավ, որ Թաշճյանը թողներ ուսումը: Հազիվ տասնինը տարեկան, նա հայտնվում է Կովկասում, ներգրավվելով Թիֆլիսի և Բաքվի հայ թատերական կյանքում: Թաշճյանի առաջին դերերից մեկը եղավ Լաերտը՝ Կարապետ Գալֆայանի (1877-1920) միստիկական Համլետի կողքին: 1908-09 թթ. մասնակցել է Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության և Զուբալովի ժողովրդական տան ներկայացումներին՝ դառնալով Սիրանույշի, Ազնիվ Հրաչյայի, Հովհաննես Զարիֆյանի և այլ նշանավոր դերասանների խաղընկերը: Այդ տարիներին արդեն դրամատիկական խաղի նրա ձիրքը «նկատվել է և գնահատվել»,- գրում է Լևոն Հախվերդյանը,- շնորհքն անկասկած է, ապագա կունենա, եթե «կանոնավոր զարգացնի իր ձիրքը»:

Կանոնավոր ներկայացումներից սակայն, գերադասելով «հյուրախաղային դերասանի ոչնչով չհսկվող» անկանոն գործունեությունը, Թաշճյանը խմբեր է կազմում և իր տարբեր դերերով (Անդրեաս էլիզբարյան՝ «Պատվի համար», Անանիա Գլախա՝ «Դավաճանություն», Ռասպլյուև՝ «Կրեչինսկու հարսանիքը») վարպետությունը հղկելուց բացի, ճանաչվել ու գնահատվել է Կովկասում:

1917-ին Արմեն Արմենյանի դրամա-օպերետային խմբի կազմում Մկրտիչ Թաշճյանը հյուրախաղերով գալիս է Թավրիզ՝ այնտեղ գտնելով Թիֆլիսին բավական մոտ թատերական միջավայր: Հայ դերասաններն արդեն ունեին իրենց թատրոնի շենքը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան հոյակերտ մի կառույց: Հասարակության բոլոր շերտերը հրապուրված էին բեմարվեստով, եկեղեցու հանդեպ ունեցած պաշտամունքն անգամ ստորադասելով թատրոնին: Այնպես որ դպիր Մկրտիչ երկարակեցյանը, լինելով Թավրիզում, գրել է. «Դավրիժեցի հայեր շատ ավելի թատերասեր են, քան եկեղեցասեր»:

Սա կարևոր հանգամանք էր, որպեսզի Մկրտիչ Թաշճյանը իրեն պատուհասած աղետից հետո. նա նոր էր կորցրել իր երկու զավակներին, լքել կնոջը՝ անվանի դերասանուհի Սյուզան Գարագաշին (1897-1944), որոշեր մնալ Թավրիզում: Անվերջանալի հետապնդումները նույնպես մղեցին նրան դիմելու այդ քայլին, մերժելով անգամ իր նորակազմ խմբին միանալու Սիրանույշի առաջարկը: «...Ինձ պակասում է գլխավոր դրամատիկ դերակատար,- գրում է արտիստուհին Երևանից, իր՝ 1917 թ. դեկտեմբերի 14-ի թվակիր նամակում:- Սիրելի Թաշճյան, խնդրում եմ մի մերժեք իմ առաջարկությունը, և այս նամակս ստանաք թե չէ՝ պատասխանեցեք ինձ»: Մեծանուն դերասանուհու և խաղընկերների խնդրանքին հակառակ, Մկրտիչ Թաշճյանն իր որոշման մեջ մնաց անդրդվելի՝ հետագայում զղջալու պահերին անգամ համոզվելով, որ իր համար այլ ելք չէր կարող լինել:

Մինչդեռ Թավրիզի թատրոնին մոտ կանգնած մարդիկ, ողջունելով Թաշճյանի քայլը, համոզված էին, որ նրա նման հմուտ արվեստագետի ներկայությունը միայն կխթաներ տեղի թատերական կյանքը:

Թատերական արվեստին քաջածանոթ ղեկավարը, անշուշտ, պետք է լիներ Մկրտիչ Թաշճյանը, որի շնորհիվ տեղի հայ թատերական շարժումը կազմակերպված բնույթ ստացավ՝ համախմբելով Թավրիզի գրեթե բոլոր դերասանական ուժերը. Մուշեղ Հովհաննիսյան՝ հետագայում հմուտ բեմադրիչ, որի աճեցրած սաները դարձան 1950-ականների Թեհրանի աչքի ընկնող թատերական գործիչներ, ինչպես նաև՝ Վարդան Մելիք Աբրահամյան, Արծրունի Գորոյան, Ասատուր և Վարդան Մելիք Աբրահամյան եղբայրներ և ուրիշներ: Այս կազմով էլ Թաշճյանը բեմադրեց Հենրիկ Իբսենի «Ժողովրդի թշնամին կամ Դոկտոր Ստոկման», Ֆրիդրիխ Շիլլերի «Ավազակներ», Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» և այլ գործեր:

Մկրտիչ Թաշճյանը, ինչպես և սպասվում էր, կիրառեց սկզբունքորեն նոր մոտեցումներ ինչպես դերասանական խաղի, այնպես էլ ռեժիսորական արվեստի նկատմամբ: Ի տարբերություն մեկընդմիշտ գտնված ամպլուաների, Թաշճյանի հերոսներն ունեին կենդանի նկարագիր, իսկ բեմում նրանց վարքագիծը պատճառաբանված էր ու բնական: «Գլխավորն այն է,- գրում է Թաշճյանը,- որ դերասանը կերպարի մեջ գտնի մի այնպիսի հատկանիշ կամ բնավորության գիծ, որը կարողանա սնել նրա դերասանական խաղը, նյութ տալ երկարատև ապրումների համար»:

Սա մի ելակետ էր, որը լիովին համընկնում է Գևորգ Չմշկյանի և Գևորգ Պետրոսյանի հայեցակետերին՝ հայ և Կոնստանտին Ստանիսլավսկու հիմնադրույթներին՝ ռուս թատրոնում: «Ամպլուան ինքը,- շարունակում է Թաշճյանը,- շատ պայմանական բան է: Ես խաղում եմ և՛ դրամատիկ, և՛ կոմիկ դերեր: (...) Իմ արտիստական հոգուն հարազատ են գիշատիչ էլիզբարովն ու միամիտ Բաղդասար Աղբարը, դիվահար Սվենգալին ու հրեշավոր Յագոն, Ստրինբերգի կիսախելագար հերոսն ու ազնիվ Ֆերդինանդը և այլն»:

Դերասանական խաղի նման ընկալման շնորհիվ է, որ Մկրտիչ Թաշճյանը կարողանում էր նույն հեշտությամբ ինչպես ծիծաղեցնել հանդիսատեսին, այնպես էլ խլել նրա արցունքները: Եթե նրա Հանրի Դյուվալը (Ալեքսանդր Բիսսոն, Անտոնի Մարս՝ «Ապահարզանի անակնկալներ») հանդիսատեսի մեջ առաջացնում էր «հոմերոսական ծիծաղ», ապա Կորրալոն (Պաոլո Ջիակոմետտի՝ «Ոճրագործի ընտանիքը»), որի ջղերը հոգեկան խռովքից ցնցվում էին «աշնանային տերևների պես», նույն հոգեկան խռովքից ցնցում էր «ամբողջ թատերասրահը»:

(Շարունակելի)

Անահիտ ՉԹՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

Հայ արաբագիտությունը և զարգացման միտումները

Հայ արաբագիտության կարևոր հիմնախնդիրները արտացոլված են ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտնականների մատենագիտական հրատարակություններում, ծրագրերում՝ կազմելով իրոք ներկայանալի պատմամշակութային ինքնատիպ և ուրույն ժառանգություն:

Ստվար և հարուստ բազմաթեմա ուսումնասիրությունները հիմք են՝ արժևորելու և տարբերակելու հայ արևելագիտության հիմնական ուղղությունները պատմագիտության և աղբյուրագիտության զարգացման առումով:

1960-70-ական թթ. հայ արաբագիտության առանցքում հիմնական ուղղվածությունը արաբական աշխարհում ազգային-ազատագրական շարժումների ընթացքն էր, դրանց լուսաբանումը: Հիմնականում գիտական ուշադրությունը սևեռված էր Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի պատմության խնդիրներին, հետագայում այդ երկրների և խնդիրների ցանկը ընդլայնվեց:

Անկախության ուղին բռնած արաբական երկրների հասարակական-քաղաքական զարգացման ընթացքը, դրա կարևորագույն փուլերը, հնարավոր շրջադարձերը գիտական գործնական տեսադաշտում են, ինչը ոչ միայն արաբագիտության, այլև արևելագիտության բոլոր օղակներում տեսանելի է:

Հայ արևելագետների շարքում վաստակաշատ արաբագետները ճանաչված են միջազգային գիտական շրջանակներում: Շատ աշխատություններ թարգմանված են տարբեր լեզուներով, ցուցադրվում են գրքերի արտասահմանյան երկրներում կազմակերպվող հեղինակավոր միջոցառումների առիթներով:

«Գիտություն» թերթի ապրիլ (4) 2012 թ. համարում Ռիֆաթ ալ-իմամը Եգիպտոսի Ալեքսանդրիայի համալսարանի Դամանհուրի մասնաճյուղի պրոֆեսոր, դոկտոր, Կահիրեի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի համակարգող, «Շամս» ամսագրի (Կահիրե) գլխավոր խմբագիրը «Գիտական սխրանք» վերնագրով հոդվածում, կարևորելով գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի արաբերեն լեզվով հրապարակված «Արաբական երկրների պատմություն» քառահատոր հիմնարար աշխատությունը, գրում է, որ «...աշխատության ամենաէական բաժիններից է հայ-արաբական միջպետական հարաբերությունների լուսաբանումը, պատմական տարբեր փուլերում, մասնավորապես, երբ քաղաքական ասպարեզում հայտնվեցին արաբական անկախ պետությունները և իր անկախությունը վերագտած Հայաստանի Հանրապետությունը»:

«Հայերն այս ասպարեզում նույնպես առաջինը եղան, և ոչ միայն այլ ժողովուրդներ, անգամ արաբները չունեն իրենց պատմությանը նվիրված նման համապարփակ և համակարգված կոթողային ուսումնասիրություն»:

Այս հարցում գնահատվել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դերը, որը, Հայաստանի ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հետ համագործակցելով, ոչ միայն գիտական, այլ նաև դիվանագիտական կադրերի իրոք դարբնոց է՝ ևս մի պատմամշակութային արժեք, ժառանգություն:

Արաբագիտությունը նորովի շարունակում է զարգացնել իր գերակայությունը: Արդի խնդիրների լուսաբանումը թելադրում է նոր մոտեցումներ, միջարաբական և ընդհանրապես տարածաշրջանում աշխարհաքաղաքական հայեցակարգի դրսևորումների առումով միջազգային կառույցների, Սփյուռքի հարցերի խոր ուսումնասիրություն:

Մշակվող թեմաները արդիական են և ներդաշնակ ՀՀ արտաքին քաղաքական զարգացումներին և ոչ միայն արաբագիտության, այլև իրանագիտության բնագավառում:

Արևելագիտությունը պահանջում է տվյալ տարածաշրջանի երկրի մենթալության, մշակույթի լայն դրսևորումների իմացություն, քանի որ պատմական չոր փաստերը ոչինչ չեն ասում: Ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր, պ.գ.դ. Ռուբեն Սաֆրաստյանն օրեցօր ավելացող նորանոր գրքերը նոր խոսք են և արժեքավոր լուսաբանումներ:

Արաբագիտության զարգացման միտումները թելադրում են ավելի ընդգրկուն մոտեցումներ, որոնք պահանջում են խոր և բազմակողմանի գիտելիքներ ոչ միայն արաբագիտության, այլև արևելագիտության և միջազգային հարաբերությունների հարցերի շուրջ:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում աստիճանաբար նկատելի է դառնում արաբագետների, թուրքագետների, իրանագետների համագործակցությունը՝ ժամանակակից թեմաներով, նորագույն շրջանի հետաքրքիր և տարածաշրջանի համար կարևոր լուսաբանումների նպատակով:

Ինստիտուտի տնօրինությունը քաջալերում է երիտասարդների ակտիվ մասնակցությունը գիտաժողովներին և հրապարակումներին: «Մերձավոր Արևելք» ժողովածուն հիանալի հնարավորություն է գիտական երիտասարդությանը՝ հրատարակվելու համար: Խմբագրական խորհուրդները հետևողական են և փորձառու:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուն, կարելի է ասել, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ձեռքբերումն է՝ եզակի բազմահատորյակ ոչ միայն Հայաստանում: Այս ժողովածուն լայն ճանաչում է վայելում, և ինչպես համոզվում եմ՝ միջազգայնագետները, մագիստրական շատ աշխատանքներ, դասախոսություններ, ատենախոսության թեմաներ ուղղորդում են այդ հատորների օգնությամբ, քանի որ հատկապես արևելագիտության նորագույն շրջանը ուշադրության կենտրոնում է:

Կարինե ՍԱՄՎԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ. թեկնածու

ՎԻԿՏՈՐ ՖԱՆԱՐՋՅԱՆ – 85

ՏԱՂԱՆԴԱԾԱՏ ՖԻԶԻՈԼՈԳՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

Մարտի 30-ին լրանում է Հայաստանի Հանրապետության ԳԱԱ ակադեմիկոս, Ռուսաստանի Դաշնության ԳԱ թղթակից անդամ, Միջազգային բազմաթիվ ակադեմիաների իսկական և պատվավոր անդամ, արտասահմանյան և միութենական մասնագիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ, Վրաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, Ուղեղի հետազոտության միջազգային կազմակերպության Հայկական բաժանմունքի և Հայկական ֆիզիոլոգիական ընկերության նախագահ, ակադ. Լ. Ա. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, Կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի (ԿՆՀ) լաբորատորիայի հիմնադիր ու անփոփոխ վարիչ, 1978-90 թթ. նաև ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, Իրանի Իսլամական Հանրապետության Խորեզմի անվան միջազգային մրցանակի մրցանակակիր, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Բարդուղեմիոսի Ֆանարջյանի ծննդյան 85 ամյակը:

Ակադ.Վ. Բ. Ֆանարջյանը ծնվել է 1929 թ. մարտի 30-ին Թբիլիսիում, համընդհանուր ճանաչման արժանացած խոշորագույն ռենտգենաբան, հայկական ռենտգենաբանական դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս, ՌԴ ԲԳԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Բարդուղեմիոս Արտեմի Ֆանարջյանի ընտանիքում: 1951-ին Վիկտոր Ֆանարջյանն ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: Նույն թվականին դառնալով ՀՀ ԳԱԱ Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտի ասպիրանտ՝ գործուղվում է Լենինգրադի ԽՍՀՄ ԲԳԱ փորձարարական բժշկության ինստիտուտ, որտեղ և 1954-ին պաշտպանելով թեզ՝ ստանում է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Բժշկական գիտությունների դոկտոր է 1964-ից: Ակադ. Վիկտոր Ֆանարջյանը 1955-ից մինչև իր կյանքի վերջը աշխատել է Հայաստանում՝ ՀՀ ԳԱԱ ակադ.Լ.Ա.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտում, նպաստելով նրա միջազգային ճանաչմանն ու հայրենական ֆիզիոլոգիական գիտության զարգացմանը:

Միջազգային ճանաչման արժանացած մեծանուն նյարդաֆիզիոլոգ Վ.Ֆանարջյանի գիտական ժառանգությունը

հրատարակված է մեծ հեղինակություն վայելող բազմաթիվ միջազգային և հայրենական գիտական հանդեսների 400-ից ավելի գիտական աշխատանքներում, այդ թվում՝ մոտ մեկ տասնյակ մենագրություններում, դասագրքերում: Ղեկավարել է 38 ատենախոսական աշխատանք, այդ թվում՝ 9 դոկտորական: Նրա անունն է կրում ՀՀ ԳԱԱ ակադ. Լ. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտի կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի լաբորատորիան: Լինելով նաև գիտության հմուտ կազմակերպիչ՝ նա մեծ ներդրում ունի Օրբելի եղբայրների անունը կրող թանգարանի հիմնադրման գործում՝ նրանց ծննդավայր Ծաղկաձորում:

Նա Հայաստանում առաջինն էր, որ ներդրել է պոտենցիալների գրանցման ներբջջային մեթոդը: Նրա համընդհանուր ճանաչման արժանացած գիտական աշխատանքները վերաբերում են ԿՆՀ-ի գործունեության, մասնավորապես ուղեղիկի և ուղեղաբնի գոյացությունների, ինտեգրման մեխանիզմների ուսումնասիրության հարցերին: Այդ ուղղությամբ կատարած եզակի ու բազմաբնույթ հետազոտությունների համար ՀՀ ԳԱԱ ակադ. Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտը ճանաչվել է գլխադասային նախկին Խորհրդային Միության կազմում, իսկ ինքը՝ Վ. Ֆանարջյանը՝ որպես համամիութենական «Ուղեղ» ծրագրի այդ բաժնի ղեկավար:

Ակադ. Վիկտոր Ֆանարջյանը պարզել է, որ գեներալիզացված պայմանական ռեֆլեքսների շարքում առկա են պայմանական կապերի երկու տարբեր համակարգեր: Ապացուցել է, որ գեներալիզացված շարժողական գործողության անցումը մասնագիտացվածի պայմանավորված է արգելակման գործոնի՝ մասնագիտացման հիմնական մեխանիզմի մշակումով: Նա պարզել է, որ այդ գործում կարևոր դեր է հատկացվում ուղեղիկին: Ակադ. Ֆանարջյանի հետազոտություններում մեծ տեղ է հատկացվում նաև դիմային նյարդի շարժանեյրոնների, անդաստակային կորիզի նեյրոնների, կարմիր կորիզի և այլ նեյրոնային գոյացությունների ակտիվության, նյարդային համակարգի առաձգականության ֆիզիոլոգիական մեխանիզմների պարզաբանման հարցերին:

Մեծ էին Վիկտոր Ֆանարջյանի կապերը արտասահմանյան բազմաթիվ երկրների՝ Ճապոնիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Հունգարիայի և այլ երկրների խոշորագույն գիտական կենտրոնների հետ, մասնակցությունը համատեղ գիտական աշխատանքների կատարմանը:

Ակադ. Վիկտոր Ֆանարջյանն իր բազմաբեղուն գիտակազմակերպչական գործունեության համար պարգևատրվել է մի շարք շքանշաններով, մեդալներով, մրցանակներով, դիպլոմներով: Մեծ գիտնականը շատ էր ուրախացել, երբ 2002-ին գիտության բնագավառում ունեցած խոշոր նվաճումների համար արժանացավ Իրանի Իսլամական Հանրապետության Խորեզմի անվան միջազգային մրցանակին: Բավարարելով ֆիզիոլոգիայի ինստիտուտի առաջատար գիտնականների խնդրանքը՝ նա մեկնեց Իրան և վերադարձավ հաղթանակով՝ Խորեզմի անվան միջազգային առաջին մրցանակով, որի համար առաջադրված էին եղել աշխարհի շուրջ 92 երկրների ճանաչված գիտնականներ:

Մեր հիշողության մեջ ակադեմիկոս Վիկտոր Բարդուղեմիոսի Ֆանարջյանը մնում է որպես անսահման տաղանդով օժտված գիտնական, փայլուն փորձարար, գիտության մեծ կազմակերպիչ, գիտության բարձր գաղափարներին նվիրված, նրբազգաց, բարի ու անսահման եռանդով օժտված անձնավորություն: Նա պատկանում է այն եզակի վառ անհատականությունների թվին, ովքեր, օժտված լինելով բնատուր տաղանդով, կարողանում են ողջ էությամբ անմնացորդ նվիրաբերվել մարդկության առաջընթացին և ստեղծել մնայուն արժեքներ: Վիկտոր Ֆանարջյանի գիտական գաղափարները երկար տարիներ կհանդիսանան նյարդաֆիզիոլոգիական հետազոտությունների անսպառ աղբյուր:

Լևոն ՄԱՆՎԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Խաչիկ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռաֆիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
կենսաբանական գիտությունների դոկտոր

«ՍԱՍՈՒՆԸ ՀՈԳՈՒ ԿԱՆՉ Է ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ»

(Սասունցի պատմաբանի աշխատությունը ընթերցելուց հետո)

Ծնունդով ու արմատներով Սասնա հպարտ լեռնաշխարհից է սերում հայ վաստակաշատ ու անվանի պատմաբան Գեղամ Կիրակոսյանը:

Հետմահու լույս տեսավ անվանի պատմաբանի «Սասուն» մենագրությունը, որը հրատարակվել է «Զանգակ-97» հրատարակչության կողմից, շքեղ ու բարձրորակ ձևավորումով: Այն բացվում է «Սասունը Ասորեստանի և Արարատյան երկրի թագավորների արձանագրություններում» բաժնով, որում ներկայացված են Սասունի վերաբերյալ հնագույն արձանագրություններն ու վավերական նյութ՝ բազմակողմ փաստարկումներով, վկայակոչումներով ու գիտական վիճարկումներով:

Սասնո երկրամասում կատարված պատմաքաղաքական անցուդարձը առավել մանրամասնությամբ է քննության առնված «Սասունը IV-XV դարերում» և «Սասուն-Տարոնը թոռնիկյանների իշխանության շրջանում» ստվարածավալ բաժիններում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Սասունի տեղագրությունը» բաժինը, որով եզրափակվում է սույն աշխատությունը: Ներկայացնելով Սասնո սահմանները՝ հեղինակը հենվում է նաև հայ ժողովրդական էպոսի՝ «Սասնա ծռեր»-ի պատումների վրա: Այս առումով վկայակոչվում է մեծանուն հայագետ Մ. Աբեղյանի հետևյալ կարծիք-հիմնավորումը. «Պատումներում տեղագրությունն ավելի ճիշտ է, քանի, որ Սասնու բնությունը, լեռն ու գետը, գյուղն ու վանքն ավելի ծանոթ են ամեն մի սասունցու, քան թե մշեցու ու մոկացու, էլ չենք ասում մակվեցու, այրարատցու կամ ապարանցու: Սասունը, լինելով վեպի կենտրոնը, նրա տեղագրության մասին ավելի մանրամասն, ավելի ճիշտ և անշփոթ տեղեկություններ կան ընդհանրապես բոլոր պատումների մեջ»:

Գեղամ Կիրակոսյանի հեղինակած գործերը ևս մեկ անգամ վկայում են, որ նա միշտ ու մշտապես ապրում էր իր կորուսյալ եզերքի՝ Սասունի անցյալով ու ներկայով, նրա բույրերով, գույներով ու կարոտով:

Մուշեղ Գալշոյանի հոգեկիցն ու սերնդակիցն էր նա, և ինչպես Մ. Գալշոյանի դեպքում, նրա հոգում ևս մեծ կռիվ, տագնապ ու անհանգստություն կար թաքնված, մեծ կռիվ աշխարհի անարդար կարգ ու սարքի դեմ, աշխարհի անիրավությունների դեմ:

Նրանք՝ Սասունի հերոսական ժողովրդի բեկորները՝ թեև հայրենազուրկ, սակայն հայրենիքը պահել էին իրենց հոգում ու սրտում և համոզված էին, որ մի օր, օրերից մի օր, ընդվզում պիտի լիներ՝ փշրելու բռնության, խաբեբայության ու ստի պատնեշը, և հայը նորից պիտի խոսեր իր բռնազավթված հայրենիքից՝ որպես հայրենատեր, արդար և աննահանջ պահանջատեր:

Հայ սերունդների գրասեղանին է Գ. Կիրակոսյանի «Սասուն»-ը՝ օդի, հաց ու ջրի պես անհրաժեշտ:

Նրա երկերի բոցեղեն տողերից պիտի ոստնեն Սասնա հայոց լեռները:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմաբան, հրապարակախոս

Բայկոնուրի ղեկավար է նշանակվել Միխայիլ Վարդանյանը

Խորհրդային և ռուսական ամենահայտնի տիեզերականի՝ «Բայկոնուրի» նոր ղեկավար է նշանակվել Միխայիլ Վարդանյանը: Այդ մասին «ՌԻԱ Նովոստիին» հայտնել է «Ռոսկոսմոսի» մամուլի ծառայության ղեկավար Իրինա Զուբարյովան: Վարդանյանի կյանքի մեծ մասն անցել է «Բայկոնուրում»: Մինչև նշանակումը 30 տարի աշխատել է տիեզերականի ինժեներային և հրամանատարաշտաբային պաշտոններում:

Ա. ԹԱՄԱՆՅԱՆԸ՝ ՀԻԴՐՈԷԼԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՐԱԽՏԱՎՈՐ

Այսօր քչերին է հայտնի, որ հայ մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը զգալի ավանդ ունի Հայաստանի հիդրոէլեկտրակայանների կառուցման գործում: Մինչև իր կյանքի վերջը՝ 1936 թ., նա եղել է Հայաստանի գերագույն տեխնիկական բաժնի վարիչը: Բազմաթիվ արխիվային փաստաթղթեր են պահպանվել, որոնցից երևում է, որ Ա. Թամանյանը ի պաշտոնե մեծ և շնորհակալ աշխատանք է կատարել:

Ա. Թամանյանի՝ 1923 թ. սեպտեմբերի 19-ի գրության մեջ, որն ուղղված է Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) գործկոմի նախագահին կառուցվող հիդրոէլեկտրակայանի նախագծի մասին, մասնավորապես ասվում է. «Ցանկալի է ֆասադի անկյունները, լուսամուտների թաղերը, վերևի կառնիզը և ներքևի ցոկոլը կառուցել տաշած քարերից..., իսկ մնացած պատերը՝ հասարակ կտրված քարերից, առաստաղը՝ երկաթ-բետոնից, իսկ տանիքը ծածկել կղմինդրով՝ փայտե ստրաբիլերի վրայից»: Մեկ ուրիշ փաստաթղթից (14 հոկտեմբերի 1924 թ.) տեղեկանում ենք, որ Ա. Թամանյանը, հիմք ընդունելով ժողկոմխորհի նախագահի հանձնարարությունը, գրության մեջ նշում է, որ անհրաժեշտ է այժմ ստեղծել մի հատուկ բաժին, որը, օժտված լինելով տեսչական ֆունկցիաներով, հնարավորություն ունենա հսկելու և ղեկավարելու ընդհանրապես Հայաստանի բոլոր վայրերի էլեկտրակայանները:

Ա. Թամանյանը մեծ ծավալի աշխատանքներ է կատարել Երևանի, Լենինականի (այժմ՝ Գյումրի), Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր), Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ), Իջևանի, Մեղրիի հիդրոէլեկտրակայանների կառուցման համար: Երևանի հիդրոէլեկտրակայանի շենքի ճարտարապետական լուծումները նույնպես պատկանում են Ա. Թամանյանին: Հարկ է նշել, որ Հայաստանում առաջին հիդրոէլեկտրակայանը կառուցվել է 1903 թ. Աղստև գետի վրա և ունեցել է 10 ԿՎտ հզորություն: Լեռնային Ղարաբաղում մինչև 1920 թ. եղել է մեկ հիդրոէլեկտրակայան Շուշի քաղաքի մոտ:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

ԵրԳԷՍի շինարարությունում:
На стройке ЕрГЭСа.



ՀԷԿ-ի տեսքը հարավ-արևելքից

☺

- Ի՞նչ ես կարծում, ինչպես են կազմվում Հորոսկոպները:
- Պողո՛ս, դու Հորոսկոպով ի՞նչ ես:
- Կարիճ:
- Հրաշալի է: Ուրեմն, ըստ Հորոսկոպի եկող շափաթ Կարիճները անպայման պետք է փակեն պարտքերը, այլապես նրանց սպառնում են մեծ անախորժություններ:

☺

Ամուսինը կնոջը.
- Թանկագինս, չե՞ս ասի, թե սոցիալական ցանցում ինչո՞ւ են իմ ընկերները պակասել:
- Սիրելիս, ներիր, խնդրում եմ, ես անզգուշաբար ջնջել եմ դրանք:
- Ուրեմն, անզգուշաբար կոճակը սեղմել ես 60 անգամ և միայն աղջիկներին:

☺

- Ինչպե՞ս ավարտվեց երեկվա քո վեճը կնոջդ հետ:
- Նա ծնկաչոք սողաց իմ կողմը:
- Պա՜հ և ի՞նչ ասաց նա քեզ:
- Լսի՛ր, դուրս արի մահճակալի տակից, վախկոտ սրիկա:

☺

- Սիրելիս, ինչո՞ւ, երբ ես երգում եմ, դու շտապում ես պատշգամբ: Ի՞նչ է, քեզ դուր չի գալիս:
- Շատ, շատ է դուր գալիս, թանկագինս: Ուղղակի ես չեմ ուզում, որ հարևանները կարծեն, թե իրոք ես քեզ ծեծում եմ:

ՄՐՑՈՒՅԹ ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ (ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ)

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հայտարարում է բաց մրցույթ հետևյալ գիտական ստորաբաժանումների վարիչների (ղեկավարի) թափուր տեղերի համար.

• «Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն» գիտական խմբի ղեկավարի
• Տեքստաբանության բաժնի վարիչի
• Արտասահմանյան գրականության և համեմատական գրականագիտության բաժնի վարիչի
• Սփյուռքահայ գրականության ուսումնասիրության բաժնի վարիչի:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա) բանասիրական գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան
բ) տասը տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում (գրականության ինստիտուտի տնօրենի անունով)
բ) երկու լուսանկար՝ 3x4 չափի
գ) ինքնակենսագրություն
դ) աշխատանքային գրքույկի պատճենը
ե) ԲՈՀ-ի կամ (ВАК)-ի կողմից տրված գիտական աստիճանի դիպլոմի պատճենը
զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկը (լրացված)
է) տեղեկանք մշտական բնակության վայրից
ը) բնութագիր վերջին աշխատավայրից
թ) տպագիր գրքերի և ուսումնասիրությունների ցանկ:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը բնօրինակներով) ներկայացնել 2014 թվականի մարտի 19-ից ապրիլի 19-ը, ժամը 11.00-ից 15.00-ն (բացի շաբաթ և կիրակի օրերից), ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գործերի կառավարչին: Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15, հեռախոս՝ 56-32-54:

Մրցույթը տեղի կունենա սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից մեկ ամիս անց՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում (ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հայտարարում է մրցույթ արևմտահայերենի բաժնի գիտաշխատողի (2 տեղ) և արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատողի (1 տեղ) թափուր տեղերի համար:

Դիմողները պետք է ունենան գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու հմտություն: Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում
բ) լուսանկար
գ) քաղվածք աշխատանքային գրքույկից
դ) ինքնակենսագրություն
ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը
զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը
է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ
ը) տեղեկանք մշտական բնակության վայրից
թ) հրատարակված աշխատանքների ցանկ
ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)
ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56 53 37:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիական ինստիտուտը հայտարարում է մրցույթ՝ «Էլեկտրոնային մանրադիտման և հիստոքիմիայի» լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար:

Անհրաժեշտ փաստաթղթերը, հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում, պետք է ներկայացնել հետևյալ հասցեով՝ ք. Երևան 0028, Օրբելի եղբայրների փողոց 22: Հեռ.՝ 22-17-54:

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 21.03.2014 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА